ԱՎԱՆԴԱԿԱՆ ԲԺՇԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Կլինիկական աշխատանքների գծով պատասխանատուի
հաշվետվություն
2022-2023 ուստարվա «Բուժական գործ» և «Ստոմատոլոգիա» ֆակուլտետների
պրակտիկայի վերաբերյալ

1. Ամբիոնների և ուսումնական մասի նախապատրաստական աշխատանքները պրակտիկայի կազմակերպման ուղղությամբ

ԱԲՀ-ի 2022-2023 ուստարվա ուսումնաարտադրական պրակտիկայի կազմակերպման և անցկացման նպատակով ուսումնական մասի և կլինիկական ամբիոնների վարիչների հետ համատեղ իրականացվել են հերթական կազմակերպչական աշխատանքներ, մասնավորապես՝ նշանակվել են պրակտիկայի ղեկավարներ՝ ըստ առարկաների և կուրսերի, կազմվել է պրակտիկայի ժամանակացույցը:

Պրակտիկայի անցկացման կլինիկական բազաները վերընտրվել են մասնագիտական ուղղվածությանը համապատասխան՝ համալսարանի հետ կնքված երկկողմանի պայմանագրերի հիման վրա:

ԱԲՀ ուսանողների ուսումնաարտադրական պրակտիկայի կազմակերպման և անցկացման կանոնակարգի համաձայն օտարերկրյա ուսանողներն ինքնուրույն ընտրել են պրակտիկայի կլինիկական բազան՝ նախապես համաձայնեցնելով ուսումնական մասի պրակտիկայի ղեկավարի հետ:

Պրակտիկան անցկացնելուց առաջ հանդիպումներ են կազմակերպվել պրակտիկաների անցկացման ղեկավարների և ուսանողների հետ, տեղեկատվություն է տրամադրվել իրենց իրավունքների և պարտականությունների, պրակտիկայի անցկացմանը ներկայացվող պահանջների վերաբերյալ:

2. Պրակտիկայի ժամանակացույցի վերաբերյալ ամփոփ տեղեկատվությունը ներկայացված է հավելված 1-ում և 1.1-ում:

3. Տեղեկություններ պրակտիկայի ծրագրերի կատարման վերաբերյալ.

2022-2023 ուստարվա ուսումնաարտադրական պրակտիկան ԱԲՀ-ի Բուժական և Ստոմատոլոգիական ֆակուլտետներում կազմակերպվել և անցկացվել է ռեկտորատի նիստով հաստատված ժամանակացույցի և պրակտիկայի ծրագրերի համաձայն: Հաշվետու ժամանակահատվածում տարբեր կուրսերում պրակտիկան անցկացվել է 11 ղեկավարի կողմից, որոնց ներկայացրած հաշվետվություններն ամփոփվել են կլինիկական աշխատանքների գծով պատասխանատուի կողմից:

Բուժական ֆակուլտետի պրակտիկաների ընթացքում ուսանողները ծանոթացել են բուժկանխարգելիչ հիմնարկի աշխատանքներին, բուժքրոջ իրավունքներին և պարտականություններին, բուժքույրական միջամտությունների անցկացման պրակտիկ հմտություններին, հիվանդի խնամքի առանձնահատկություններին տարբեր պաթոլոգիաների դեպքում, նշանակման թերթիկների ձևակերպմանը, դեղորայքի դուրսգրման, ստացման, պահպանման և բաժանման կանոններին, անհետաձգելի վիճակների ախտորոշման և առաջին

բուժօգնություն ցուցաբերելու հմտություններին: Քննարկվել են նաև բժշկական էթիկայի և դեոնտոլոգիայի հիմնական սկզբունքները, բուժքույր-հիվանդ, բուժքույր-բժիշկ փոխ-հարաբերությունները, շեշտադրում է կատարվել բուժաշխատողի արտաքին տեսքի ու բարոյական կերպարի կարևորության վրա:

Պրակտիկանտները ծանոթացել են բուժհիմնարկում անցկացվող կանխարգելիչ աշխա-տանքներին, ձեռք են բերել ենթամաշկային, միջմկանային և ներերակային ներարկումների հմտություններ:

Պրակտիկայի ընթացքում պրակտիկանտները մասնակցել են համայցերին, անամնեստիկ տվյալների հավաքմանը, ախտորոշման և բուժման պլանի մշակմանը, ինչպես նաև լաբորատոր և գործիքային հետազոտությունների արդյունքների վերծանմանը:

Այսպիսով, պրակտիկայի հիմնական նպատակն է եղել տեսական գիտելիքների ամրապնդումը և բարելավումը գործնականում, կլինիկական գիտելիքների ձեռքբերումը և կիրառումը:

Ստոմատոլոգիական ֆակուլտետում պրակտիկայի ընթացքում պրակտիկանտները ծանոթացել են ստոմատոլոգիական բժշկական հիմնարկի կառուցվածքին և աշխատանքի կազմակերպմանը, ընդունարանի, ախտահանիչ կաբինետի, ատամնատեխնիկական լաբո-ռատորիայի աշխատանքին, բժշկական փաստաթղթերի լրացման և նշանակման թերթիկների ձևակերպման կանոններին, բուժքույրական միջամտությունների անցկացման պրակտիկ հմտություններին:

Ուսանողներն, ըստ կուրսերի, ծանոթացել են թերապևտ-ստոմատոլոգի, վիրաբույժ-ստոմատոլոգի, օրթոպեդ-ստոմատոլոգի աշխատանքին, ամրապնդվել են նրանց գործնական հմտությունները:

Այսպիսով, պրակտիկան նպաստել է ուսանողների ստացած տեսական գիտելիքների ամրապնդմանը, բարելավմանը և օգտագործմանը կլինիկական պրակտիկայում, գործնական հմտությունների ձեռքբերմանը:

Պրակտիկայի ընթացքում առնչվել ենք հետևյալ խնդիրներին՝

- օտարերկրյա ուսանողների հաղորդակցվելը բուժհաստատության աշխատակիցների և հիվանդների հետ՝ պայմանավորված լեզվի անբավարար իմացությամբ,
- պրակտիկայի ղեկավարների համար՝ արտերկրում պրակտիկա անցնող ուսանողների հետ կապը իրականացվում է միայն էլեկտրոնային փոստի միջոցով:

4.Պրակտիկանտների աշխատանքի բնութագիրը

Ամփոփելով պրակտիկանտների լրացրած թղթապանակները, զրուցելով նրանց հետ՝ պարզվել է, որ պրակտիկային վերաբերել են պատասխանատվությամբ, կատարել են տարբեր միջամտություններ, ներկա են գտնվել վիրահատություններին, հերթապահել են և այլն:

2-րդ և 3-րդ կուրսի ուսանողներն աշխատել են 2020-2021 ուստարում մշակված թղթապանակի նոր ձևաչափով:

Ուսանողները, որպես պրակտիկայի **ուժեղ կողմեր,** նշել են՝

- կլինիկական գիտելիքների ձեռքբերում,
- տարբեր բժշկական միջամտությունների հմտությունների ձեռքբերում,

- աշխատանք տարբեր մասնագետների հետ:

Թույլ կողմեր

- լեզվական արգելք,
- պրակտիկայի ոչ բավարար տևողություն:

Հնարավորություններ՝

- ինքնակատարելագործում,
- տեսական գիտելիքների շարունակական բարելավում և ամրապնդում,
- կլինիկական գիտելիքների ձեռքբերում և կիրառում:

Ընդհանուր առմամբ, սպասելիքները պրակտիկանտների կողմից գնահատվել են որպես բավարար:

4. **Պրակտիկայի գնահատականները ներկայացված են հավելված 2-ում, հավելված 2.1-ում և հավելված 2.2-ում:**
5. **Պրակտիկայի առաջադիմությունը՝ արտահայտված տոկոսներով, ներկայացված է հավելված 3-ում և հավելված 3.1-ում:**
6. **Պրակտիկայի ղեկավարների ուժեղ և թույլ կողմերը.**

Պրակտիկան ղեկավարել են փորձառու մասնագետները:

Պրակտիկան անցկացնող բժիշկների ծանրաբեռնվածությունը մեծ է:

7. **Պրակտիկայի ղեկավարի առաջարկները պրակտիկայի կազմակերպման գործընթացի բարելավման վերաբերյալ հետևյալն են՝**

- Պրակտիկայի մատյանները հանել գործածությունից,
- 2023-2024 ուստարվանից ուսումնաարտադրական պրակտիկայի մատենավարումն իրականացնել լրամշակված թղթապանակով, որում արվել են ստորև նշված փոփոխությունները՝
  - պրակտիկայի թղթապանակի Անհատական աշխատանքի օրագիր բաժնում ավելացնել հաճախումների, ընթացիկ և վերջնական գնահատականի սյուներ և տողեր,
  - ուսումնաարտադրական պրակտիկայի կանոնակարգում առկա գնահատման ստուգարքային աղյուսակում (N5) փոփոխություններ անել՝ համապատասխան ԱԲՀ գիտելիքների ստուգման և գնահատման կարգի, ինչպես նաև պարզեցնել հաճախումների սանդղակը:

Վերոհիշյալ առաջարկներն արդեն ընդունվել և հաստատվել են Գիտխորհրդի կողմից:

- Առաջարկվել է նաև՝ հաշվի առնելով ուսանողների մոտ առկա լեզվական խնդիրը՝ վերանայել հայոց լեզվի դասավանդման մեթոդիկան, ստուգարքը փոխարինել քննությունով:

Հիմք ընդունելով ԱԲՀ ռեկտորատի 08.05.2023թ-ի թիվ 33 արձանագրության որոշումը՝ «Ստոմատոլոգիա» և «Բուժական գործ» մասնագիտությունների հերթական ուսումնա-արտադրական պրակտիկաները՝ ստոմատոլոգիական ֆակուլտետի 2-րդից 5-րդ կուրսերի և բուժական ֆակուլտետի 2-րդից 5-րդ կուրսերի համար կազմակերպվել և անցկացվել են 09.01-19.01.2023թ. և 23.05-22.06.2023թ. ժամկետներում:

«Ստոմատոլոգիա» մասնագիտության հերթական ուսումնաարտադրական պրակտիկաները կազմակերպվել են ԱԲՀ ԳԲՈԻԿ-ում և Արմենիա ԲԿ-ում հետևյալ ձևով՝

2-րդ կուրսում «Բուժքրոջ օգնական» պրակտիկան ղեկավարել են Ա. Գևորգյանը (201 խումբ՝ 8 օտարերկրյա ուսանող) և Գ. Մանաշյանը (202 խումբ՝ 8 հայ ուսանողը), պրակտիկայի ավարտին 16 ուսանող հանձնել է ստուգարքը հետևյալ վերջնարդյունքներով՝ 201 խմբում՝ 3 գեր., 5 լավ, 202 խմբում՝ 4 գեր., 4 լավ:

3-րդ կուրսում «Թերապևտ-ստոմատոլոգի օգնական» պրակտիկան ղեկավարել է Ա. Զեյնալյանը, պրակտիկայի ավարտին 10 ուսանող հանձնել է ստուգարքը՝ 7 գեր., 3 բավ.:

4-րդ կուրսում «Վիրաբույժ-ստոմատոլոգի օգնական» պրակտիկան ղեկավարել է Տ. Պետրոսյանը: Պրակտիկայի ավարտին 2 ուսանող գերազանց հանձնել է ստուգարքը:

4-րդ կուրսում «Օրթոպեդ-ստոմատոլոգի օգնական» պրակտիկան ղեկավարել է Ա. Դելարամը, պրակտիկայի ավարտին 3 ուսանող գերազանց հանձնել է ստուգարքը:

5-րդ ավարտական կուրսում «Մանկական ստոմատոլոգիա» ուսումնաարտադրական պրակտիկան կազմակերպվել է 09.01.2023թ-ից մինչև 24.01.2023թ-ը, ներառելով շաբաթ օրերը: Պրակտիկան ղեկավարել են Ա. Զեյնալյանը (501 խումբ) և Գ.Մանաշյան (502 և 503 խմբեր), որի արդյունքում 51 ուսանող պրակտիկան ավարտվել է ստուգարքով. 501 խմբում՝ 15 ուսանող (5 գեր., 6 լավ, 4 բավ.), 502 և 502 խմբերում՝ 34 ուսանող (15 գեր., 19 լավ):

Բուժական գործ մասնագիտության հերթական ուսումնաարտադրական պրակտիկաները կազմակերպվել են հետևյալ կերպ՝

2-րդ կուրսում՝ «Բուժքրոջ օգնական», պրակտիկան անցկացվել է ԱԲՀ ԳԲՈԻԿ-ում, ղեկավարներ՝ Դավթյան Ա., Կրասնիկովա Ա.,

3-րդ կուրսում՝ «Մանիպուլյացիոն բուժքրոջ օգնական», պրակտիկան անցկացվել է ԱԲՀ ԳԲՈԻԿ-ում, ղեկավարներ՝ Հովհաննիսյան Հ., Նուրիջանյան Ա.,

4-րդ կուրսում՝

- «Բժշկի օգնական/Թերապիա», պրակտիկան անցկացվել է Շենգվիթ ԲԿ-ում, «Քանաքեռ-Զեյթուն» ԲԿ-ում, ԱԲՀ ԳԲՈԻԿ-ում և Սուրբ Գրիգոր Լուսավորիչ ԲԿ-ում, ղեկավարներ՝ Դավթյան Ա., Հովհաննիսյան Հ., Գասպարյան Մ.,
- «Բժշկի օգնական/Վիրաբուժություն» պրակտիկան անցկացվել է «Վնասվածքաբանության և օրթոպեդիայի գիտական կենտրոնում» և «Շենգավիթ» ԲԿ-ում, ղեկավարներ՝ Ավագյան Է., Թադևոսյան Ա.:

5-րդ կուրսում՝

- «Բժշկի օգնական/Մանկաբարձություն-գինեկոլոգիա» պրակտիկան անցկացվել է Սուրբ Գրիգոր Լուսավորիչ և Շենգավիթ ԲԿ-ում, ղեկավարներ՝ Արշակյան Տ., Խաչատրյան Ա., Ասատրյան Ա.,
- «Բժշկի օգնական/Շտապ բուժօգնություն» պրակտիկան անցկացվել է «ԱԻՆ»-ում և «Շտապ բուժօգնության կայան №5» ՓԲԸ-ում, ղեկավարներ՝ Օհանյան Հ., Գրիգորյան Կ.:

2022-2023 ուստարում «Ստոմատոլոգիա» և «Բուժական գործ» մասնագիտությունների պրակտիկան կազմակերպվել է նաև այլ բուհերից տեղափոխված այն ուսանողների համար,

ովքեր ունեցել են առարկայական տարբերություններ նախորդ ուստարիների ուսումնա-արտադրական պրակտիկայից։

Ուսումնաարտադրական պրակտիկայից առարկայական տարբերությունները լրացվել են հետևյալ կերպ՝

1. «Ստոմատոլոգիա» մասնագիտության 5-րդ ավարտական կուրսում 10 ուսանող «Թերապևտ ստոմատոլոգի օգնական» ուսումնաարտադրական պրակտիկան անցել է ԱԲՀ ԳԲՈՒԿ-ում 22.04-22.06.2023թ. (ամեն չորեքշաբթի և հինգշաբթի օրերին)՝ պրակտիկայի ղեկավար Ա. Զեյնալյան։

2. «Բուժական գործ» մասնագիտության տարբեր կուրսերի ուսանողներն իրենց ուսումնաարտադրական պրակտիկաների առարկայական տարբերությունները լրացրել են հետևյալ կերպ՝

«Բուժքրոջ օգնական» պրակտիկան անցկացվել է 04.03-22.04.2023թ. (շաբաթ օրերին) ԱԲՀ ԳԲՈՒԿ-ում, ղեկավարել Է. Մանուկյանը (7 ուսանող)։

«Մանիպուլյացիոն բուժքրոջ օգնական» պրակտիկան անցկացվել է 24.06-01.07.2023թ., Սուրբ Գրիգոր Լուիսավորիչ ԲԿ-ում, ղեկավարել է Մ. Դավիդյանը (7 ուսանող)։

«Թերապիա/բժշկի օգնական» և «Վիրաբուժություն/բժշկի օգնական» պրակտիկաներն անցկացվել են Սուրբ Գրիգոր Լուսավորիչ ԲԿ-ում (3 ուսանող)։ «Թերապիա/բժշկի օգնական» պրակտիկան ղեկավարել է Մ. Դավիդյանը, անցկացվել է 02.03-24.03.2023թ.։ «Վիրաբուժություն/բժշկի օգնական» պրակտիկան ղեկավարել է Հ. Օհանյանը, անցկացվել է 11.03-25.04.2023թ.։

6-րդ ավարտական կուրսի 603 խմբի (24 ուսանող) համար «Բժշկի օգնական/Թերապիա» և «Բժշկի օգնական/Վիրաբուժություն» ուսումնաարտադրական պրակտիկաները կազմա-կերպվել են «Սուրբ Գ. Լուսավորիչ» ԲԿ-ում հետևյալ ձևով՝

- «Բժշկի օգնական/Թերապիա» պրակտիկան անցկացվել է 14.01.2023թ-ից մինչև 31.01.2023 թ-ը (ներառելով շաբաթ օրերը), ղեկավարել է Մ. Դավիդյանը։
- «Բժշկի օգնական/Վիրաբուժություն» պրակտիկան անցկացվել է գարնանային կիսամյակի ընթացքում՝ 02.02-ից մինչև 25.05.2023թ-ը (ամեն հինգշաբթի օրը), ղեկավարել է դասախոս Հ. Օհանյանը։

Այսպիսով, 2022-2023 ուստարվա օտարերկրյա ուսանողների 68%-ը ուսումնա-արտադրական պրակտիկան անցկացել է ՀՀ-ի հետևյալ բժշկական հաստատություններում՝ «Վնասվածքաբանության և օրթոպեդիայի գիտական կենտրոն», «Շենգավիթ» ԲԿ, «Քանաքեռ-Զեյթուն» ԲԿ, «ԱԻՆ», «Սուրբ Գրիգոր Լուսավորիչ» ԲԿ, «Արմենիա» ԲԿ, ԱԲՀ ԳԲՈՒԿ, «Շտապ բուժօգնության կայան №5» ՓԲԸ։

Օտարերկրյա ուսանողների 32%-ը, պրակտիկան անցել է ըստ բնակության վայրի՝ տարբեր բուժհաստատություններում, և ուսումնական մաս ներկայացրել այն հավաստող համապատասխան փաստաթղթեր։

16 ուսանող պրակտիկա չի անցել. հիմնական պատճառը ընտանեկան խնդիրներն են եղել։

Պրակտիկա չանցած ուսանողները, ըստ ԱԲՀ ուսանողների ուսումնաարտադրական պրակտիկայի կազմակերպման և անցկացման կանոնակարգի, պարտավորված են լրացնել

իրենց համար ակադեմիական պարտք համարվող չանցած պրակտիկան մինչև մյուս ուսումնական տարվա ավարտը։

Հավելված 1

Պրակտիկայի ժամանակացույցի վերաբերյալ տեղեկատվություն
«Բուժական» ֆակուլտետ

	Պրակտիկայի անվանումը	Պրակտիկայի անց. վայրը	Կուրս/խումբ	Ժամկետ
1.	Բուժքրոջ օգնական	ԱԲՀ ԳԲՈՒԿ, արտերկրի բուժհաստատություններ	201, 202, 203	09.06.2023-22.06.2023
2.	Բուժքույրություն, մանիպուլյացիոն բուժքրոջ օգնական	ԱԲՀ ԳԲՈՒԿ, արտերկրի բուժհաստատություններ	301, 302, 303	09.06.2023-22.06.2023
3.	Բժշկի օգնական /վիրաբուժություն/	«Վնասվածքաբանության և օրթոպեդիայի գիտական կենտրոն», «Շենգավիթ» ԲԿ, արտերկրի բուժհաստատություններ	401, 402, 403, 404, 405	09.06.2023-22.06.2023
4.	Բժշկի օգնական /թերապիա/	Շենգավիթ ԲԿ, «Քանաքեռ-Զեյթուն» ԲԿ, ԱԲՀ ԳԲՈՒԿ, Սուրբ Գրիգոր Լուսավորիչ ԲԿ, արտերկրի բուժհաստատություններ	401, 402, 403, 404, 405	23.05.2023-05.06.2023 06.06.2023-19.06.2023
5.	Բժշկի օգնական /մանկաբարձություն և գինեկոլոգիա/	Ս.Գրիգոր Լուսավորիչ ԲԿ, Շենգավիթ ԲԿ, արտերկրի բուժհաստատություններ	501, 502, 503, 504, 505	23.05.2023-05.06.2023 06.06.2023-19.06.2023
6.	Շտապ օգնության բժշկի օգնական	«ԱԻՆ», «Շտապ բուժօգնության կայան №5» ՓԲԸ, արտերկրի բուժհաստատություններ	501, 502, 503, 504, 505	23.05.2023-05.06.2023 06.06.2023-19.06.2023

Ստոմատոլոգիա ֆակուլտետ

Հավելված 1.1

	Պրակտիկայի անվանումը	**Պրակտիկայի անց. վայրը**	**Խումբ**	**Ժամկետ**
1.	Բուժքրոջ օգնական	ԱԲՀ ԳԲՈՒԿ, արտերկրի բուժհաստատություններ	201 202	07.06-20.06.2023 09.06-22.06.2023
2.	Բժիշկ-ստոմատոլոգի /թերապևտ/ օգնական	ԱԲՀ ԳԲՈՒԿ, արտերկրի բուժհաստատություններ	301	09.06-22.06.2023
3.	Բժիշկ-ստոմատոլոգի /վիրաբույժ/ օգնական	Արմենիա ԲԿ, արտերկրի բուժհաստատություններ	401	06.06-19.06.2023
4.	Բժիշկ-ստոմատոլոգի /օրթոպեդ/ օգնական	ԱԲՀ ԳԲՈՒԿ, արտերկրի բուժհաստատություններ	401	23.05-05.06.2023
5.	«Մանկական ստոմատոլոգիա»	ԱԲՀ ԳԲՈՒԿ, արտերկրի բուժհաստատություններ	501, 502, 503	09.01-19.01.2023 09.01-24.01.2023

Այսպիսով, ԱԲՀ-ի պրակտիկա անցած 419 ուսանողներից 284-ը (68%) պրակտիկան անցել է ՀՀ-ում, իսկ 135-ը (32%)՝ արտերկրներում:

Պրակտիկայի գնահատականները

/ՀՀ-ում պրակտիկա անցած ուսանողների համար/

Բուժական և ստոմատոլոգիական ֆակուլտետներ

Հավելված 2

h/h	**Պրակտիկայի ղեկավարներ**	**Պրակտիկայի անվանումը**	Կուրս/խումբ	Ուսանողների թիվը	Պրակտիկա անցած ուսանողների թիվը	**Գնահատականները**				Պրակտիկա չանցած ուսանողների թիվը
						Գերազանց	Լավ	Բավարար	Անբավարար	
1.	Դավթյան Ա. Կրասնիկովա Ա.	Բուժքրոջ օգնական	201, 202, 203, 204	52	52	13	21	18 -	- -	- -
2.	Հովհաննիսյան Հ. Նուրիջանյան Ա.	Բուժքույրություն, մանիպուլյացիոն բուժքրոջ օգնական	301, 302, 303,	50	50	10	15	25	-	-
3.	Ավագյան Է. Թադևոսյան Ա.	Բժշկի օգնական /վիրաբուժություն/	401, 402, 404, 403, 405	49	49	26	22	1	-	-
4.	Հովհաննիսյան Հ. Դավթյան Ա. Գասպարյան Մ.	Բժշկի օգնական /թերապիա/	401, 402, 404, 403, 405	50	50	10	23	17	-	-
5.	Արշակյան Տ. Ասատրյան Ա. Խաչատրյան Ա.	Բժշկի օգնական /մանկաբարձություն և գինեկոլոգիա/	501, 502+505, 503+505, 504+505	53	53	39	14	-	-	-
6.	Գրիգորյան Կ. Օհանյան Հ.	Շտապ օգնության բժշկի օգնական	501, 502+505, 503+505, 504+505	54	54	42	10	2	-	-
7.	Գևորգյան Ա.	Բուժքրոջ օգնական	201	8	8	5	3	-	-	-

8.	Մանաշյան Գ.	Բուժքրոջ օգնական	202	8	8		4	4	-	-	-
9.	Զեյնալյան Ա.	Բժիշկ-ստոմատոլոգի /թերապևտ/ օգնական	301	10	7		-	3			
10.	Դելարամ Ա.	Բժիշկ-ստոմատոլոգի/օրթոպեդ/ օգնական	401	3	3		3	-	-	-	-
11.	Պետրոսյան Տ.	Բժիշկ-ստոմատոլոգի /վիրաբույժ/ օգնական	401	2	2		-	-	-	-	-
12.	Գևորգյան Ա. Մանաշյան Գ.	Մանկանական ստոմատոլոգ	501, 502, 503	49	49		20	25	4	-	-

Պրակտիկայի վերջնարդյունքների ամփոփում

/Արտերկրում պրակտիկա անցած ուսանողների համար/

Բուժական ֆակուլտետ

Հավելված 2.1

Պրակտիկայի անվանումը	Կուրս/խումբ	Ուսանողների թիվը	Պրակտիկա անցած ուսանողների թիվը	**Գնահատականները**				Պրակտիկա չանցած ուսանողների թիվը
				Գերազանց	Լավ	Բավարար	Անբավարար	
Բուժքրոջ օգնական	201, 202, 203, 204	**24**	**19**	**16**	**2**	**1**	-	**5**
Բուժքույրություն, մանիպուլյացիոն բուժքրոջ օգնական	301, 302, 303	**33**	**24**	**18**	**6**	-	-	**9**
Բժշկի օգնական /թերապիա/	401, 402, 403, 404, 405	**59**	**58**	**41**	**17**	-	-	**1**
Բժշկի օգնական /վիրաբուժություն/	401, 402, 403, 404, 405	**57**	**56**	**41**	**15**	-	-	**1**
Բժշկի օգնական /մանկաբարձություն և գինեկոլոգիա/	501, 502, 503, 504, 505	**30**	**30**	**27**	**3**	-	-	-
Շտապ օգնության բժշկի օգնական	501, 502, 503, 504, 505	**28**	**28**	**25**	**3**	-	-	-

Պրակտիկայի վերջնարդյունքների ամփոփում

/ Արտերկրում պրակտիկա անցած ուսանողների համար/

Ստոմատոլոգիական ֆակուլտետ

Հավելված 2.2

Պրակտիկայի անվանումը	Կուրս/խումբ	Ուսանողների թիվը	Պրակտիկա անցած ուսանողների թիվը	**Գնահատականները**				Պրակտիկա չանցած ուսանողների թիվը
				Գերազանց	Լավ	Բավարար	Անբավարար	
Բուժքրոջ օգնական	201	**2**	**1**	**1**	-	-	-	**1**
Բժիշկ-ստոմատոլոգի /վիրաբույժ/ օգնական	401	**1**	**1**	**1**	-	-	-	-
Մանկանական ստոմատոլոգի օգնական	501	**2**	**2**	**2**	-	-	-	-
				Ընդհանուր գնահատականները				Պրակտիկա չանցած ուս. ընդ. թիվը
				Գեր.	Լավ	Բավ.	Անբավ.	
				4	-	-	-	-

Պրակտիկայի առաջադիմության ամփոփում՝ արտահայտված տոկոսներով

/ՀՀ-ում պրակտիկա անցած ուսանողների համար/

Բուժական ֆակուլտետ

Հավելված 3

					Առաջադիմություն		
h/h	**Պրակտիկայի ղեկավարներ**	**Պրակտիկայի անվանումը**	**Խումբ**	**Պրակտիկա անցած ուսանողների թիվը**	**Գերազանց %**	**Լավ %**	**Բավարար %**
1.	Դավթյան Ա. Կրասնիկովա Ա.	Բուժքրոջ օգնական	201, 202 203, 204	52	25%	40%	35%
2.	Հովհաննիսյան Հ. Նուրիջանյան Ա.	Բուժքույրություն, մանիպուլյա-ցիոն բուժքրոջ օգնական	301, 302, 303,	50	20%	30%	50%
3.	Ավագյան Է. Թադևոսյան Ա.	Բժշկի օգնական /վիրաբուժություն/	401, 402, 404, 403, 405	49	53%	45%	2%
4.	Հովհաննիսյան Հ. Դավթյան Ա. Գասպարյան Մ.	Բժշկի օգնական /թերապիա/	401, 402, 404, 403, 405	50	20%	46%	34%
5.	Արշակյան Տ. Ասատրյան Ա. Խաչատրյան Ա.	Բժշկի օգնական /մանկաբար-ձություն և գինեկոլոգիա/	501, 502+505, 503+505, 504+505	53	74%	26%	-
6.	Գրիգորյան Կ. Օհանյան Հ.	Շտապ օգնության բժշկի օգնական	501, 502+505, 503+505, 504+505	54	78%	18%	4%

7.	Գևորգյան Ա.	Բուժքրոջ օգնական	201, 202	16	56%	44%	-
8.	Մանաշյան Գ.	Բուժքրոջ օգնական					
9.	Զեյնալյան Ա.	Բժիշկ-ստոմատոլոգի /թերապևտ/ օգնական	301	10	70%	-	30%
10.	Դելարամ Ա.	Բժիշկ-տոմատոլոգի/օրթոպեդ/ օգնական	401	3	100%	-	-
11.	Պետրոսյան Տ.	Բժիշկ-ստոմատոլոգի /վիրաբույժ/ օգնական	401	2	100%	-	-
12.	Գևորգյան Ա. Մանաշյան Գ.	Մանկական ստոմատոլոգ	501, 502, 503	49	41%	51%	8%
Առաջադիմության միջինացված ցուցանիշ %				284	63,7%	38%	23%

Պրակտիկայի առաջադիմության ամփոփում

/Արտերկրում պրակտիկա անցած ուսանողների համար/

Բուժական ֆակուլտետ

Հավելված 3.1

Պրակտիկայի անվանումը	Կուրս/խումբ	Պրակտիկա անցած ուսանողների թիվը	**Գնահատականները**				Պրակտիկա չանցած ուսանողների թիվը
			Գերազանց	Լավ	Բավարար	Անբավարար	
Բուժքրոջ օգնական	201, 202, 203, 204	**19**	**84%**	**10%**	**5%**	**-**	**5**
Բուժքույրություն, մանիպուլյացիոն բուժքրոջ օգնական	301, 302, 303	**24**	**75%**	**25%**	**-**	**-**	**9**
Բժշկի օգնական /թերապիա/	401, 402, 403, 404, 405	**58**	**71%**	**29%**	**-**	**-**	**1**
Բժշկի օգնական /վիրաբուժություն/	401, 402, 403, 404, 405	**56**	**73%**	**27%**	**-**	**-**	**1**
Բժշկի օգնական /մանկաբարձություն և գինեկոլոգիա/	501, 502, 503, 504, 505	**30**	**90%**	**10%**	**-**	**-**	**-**
Շտապ օգնության բժշկի օգնական	501, 502, 503, 504, 505	**28**	**89%**	**11%**	**-**	**-**	**-**
Առաջադիմության միջինացված ցուցանիշ %		**131**	**80%**	**19%**	**5%**	**-**	**12%**

Առաջարկներ և հանձնարարականներ պրակտիկայի կազմակերպման գործընթացի բարելավման վերաբերյալ

- պրակտիկայի ընթացքում տեսական և գործնական գիտելիքների միջև կապի ապահովման հնարավոր միջոցների բարելավում,
- ուսանողների և դասախոսների շարունակական նախապատրաստում պրակտիկայի արդյունավետ անցկացման համար /ծանոթացում պրակտիկայի անցկացման կանոնակարգին, պրակտիկայի թղթապանակի լրացմանը և այլն/,
- պրակտիկայի լրամշակված թղթապանակի գործնականում կիրառման արդյունավետության գնահատում,
- յուրաքանչյուր պրակտիկայի ավարտից հետո ուսանողների շրջանում պրակտիկայից բավարարվածության հարցումների անցկացում, արդյունքների վերլուծություն և քննարկում համապատասխան ստորաբաժանումներում:

Պրակտիկայի ղեկավար՝ Ա. Մկրտչյան